ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0090, ք.Երևան, Շոպրոնի 77

N 91/13/88 «15» 06 2023թ.

Ռաֆայել Աղաջանյանին

Հասցե՝ ք. Երևան, Ս. Տարոնցու փ 1/12 18բն

Ուղարկվում է Ձեր դիմումի հիման վրա ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում իրականացված վարչական բողոքարկման վարույթի արդյունքում թիվ 8300573688 վարչական ակտն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշումը:

Առդիր՝ « 3 » թերթ:

Պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ՝ ***Ա. Մաթևոսյան***

Կատ.՝ Վ. Բալասանյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 05.05.2023թ.-ին կայացված թիվ 8300573688 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

« 12 » հունիս 2023թ. ք. Երևան

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Ա. Մաթևոսյանս, վերանայելով Ռաֆայել Աղաջանյանի (Այսուհետ՝ դիմող) 12.05.2023թ.-ի դիմումի հիման վրա հարուցված վարչական բողոքարկման վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

05.05.2023թ. ժամը 17:34-ի սահմաններում Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Ներսես Աշտարակեցու փողոցում դիմողը <<Հոնդա>> մակնիշի 35 PP 289 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը կանգնեցրել է հետիոտնային անցման վրա, ինչը նկատել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արագածոտնի մարզի գումարտակի ավագ պարեկ Գարիկ Հովհաննիսյանը և «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. հունիսի 28-ի N955-ն որոշման հավելված 1-ի 84-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի խախտման համար, կազմել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի հատկանիշներով 05.05.2023թ.-ին կայացվել է թիվ 8300573688 որոշումը՝ դիմողին տուգանելով 15.000 ՀՀ դրամի չափով և 1 միավոր տուգանային միավորի կիրառելու մասին :

Դիմողը 12.05.2023թ.-ի դիմումով խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 05.05.2023թ. կայացված թիվ 8300573688 որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում հարուցվել է վարչական բողոքարկման վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված կարգով վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու և լսված լինելու հնարավորություն տալու նպատակով դիմողին ուղարկվել է ծանուցում վարչական լսման օրվա և ժամի վերաբերյալ:

Դիմումի քննարկման արդյունքում ձեռք բերված ապացույցների և փաստական տվյալների համադրմամբ պարզվել է, որ վարչական իրավախախտման գործով 05.05.2023թ.-ին կայացված թիվ 8300573688 որոշումը ենթակա է կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ.

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության ծառայողին ամրակցված տեսաձայնագրող սարքի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ իրավախախտման վայրում տեսանելի են հետիոտնային անցման գծանշումները և <<Հոնդա>> մակնիշի 35 PP 289 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի վարորդը ընսունում է իր կողմից կատարած իրավախախտումը՝ տրանսպորտային միջոցը հետիոտային անցման վրա տեղակայելու փաստը և հայտնում, որ տեղ չկար:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն **հետիոտնային անցում է համարվում ճանապարհային նշաններով և (կամ) գծանշումներով նշված և օրենսդրությամբ սահմանված կարգով հետիոտների տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասի առանձնացված հատվածը:**

«Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. Հունիսի 28-ի N955-ն որոշման հավելված 1-ի 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է՝ հետիոտնային անցումների վրա և երթևեկելի մասի հետ հետիոտնային անցումների շփման եզրերից (դեպի երթևեկելի մասեր) 5 մ պակաս վայրում:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառումով՝ 1 միավոր:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողը պարտավոր է սույն հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով ազդանշան տալով կանգնեցնել տրանսպորտային միջոցը, եթե ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, կամ տրանսպորտային միջոցի ընթացքը կամ տեղափոխվող բեռը, կամ վարորդը կամ ուղևորներն իրենց վարքագծով ակնհայտորեն վտանգ են ստեղծում երթևեկության անվտանգության համար:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Այսպիսով, դիմողի արարքում առկա է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 05.05.2023թ.-ին կայացված թիվ 8300573688 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշման օրինակն ուղարկել դիմողին և ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արագածոտնի մարզի գումարտակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

Պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ՝ Ա. Մաթևոսյան